



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՉԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



Ի ՊԱՏԻ ՎԵՅԱՓԱՌԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ «ԱՍՊԱՐԷՁ»ԻՆ ԿՈՂՍԷ, ԵՒ ՊԱՐԳԵՄԱՏՐՈՒՄ ՆԱԶԱՐԷԹ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին Արեւմտեան Միացեալ Նահանգներու մեր Թեմին շնորհուած հովուապետական այցելութեան իրաքանչիւր հանգրուանը կը յատկանշուի մեր հաւաքական կեանքը յուզող ու շահագրգռող հանդիսութիւններով ու ձեռնարկներով, որոնց ընթացքին, Վեհափառ Հայրապետը առիթներ կը ստեղծէ նաեւ գնահատանքի արժանացնելու վաստակաւոր հայորդիներ ու ծառայողներ: Այս իմաստով, «Ասպարէզ» օրաթերթի խմբագրութեան կողմէ ի պատիւ Վեհափառ Հայրապետին կազմակերպուած ընդունելութիւնը առիթ եղաւ պատուելու բազմաշխատ խմբագիր ու մտաւորական Նազարէթ Պերպերեանը, աւելի քան քառասուն տարիներու վրայ երկարող մամլոյ ու ազգային իր ծառայութիւններուն համար:

Վեհափառին ի պատիւ ճաշկերոյթի ձեռնարկը տեղի ունեցաւ Ուրբաթ, 14 Յոկտեմբերի երեկոյեան, Տիար Գօգօ Թօփալեանի հիւրընկալութեամբ, անոր բնակարանին մէջ, աւելի քան 150 ազգայիններու մասնակցութեամբ: Վեհափառ Հայրապետին կողքին, ներկայ էին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, հոգեւոր հայրեր, Ազգ. Կեդրոնական Վարչութեան ու Թեմիս Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներ, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան եւ անդամներ, «Ասպարէզ»ի տնօրէն Տիար Աբօ Պողիկեան եւ մամուլի աշխատակիցներ, մեծարեալ խմբագիրին ընտանիքի անդամներ, բարերարներ ու հայ մամուլի բարեկամներ:

Երեկոն ուներ մտերմիկ ու պաշտօնական բաժիններ:

Իր շքախումբին հետ հիւրընկալին բնակարանը հասնելով, Վեհափառ Հայրապետը կատարեց աղ ու հացի օրհնութիւն, ապա առօթքով օրհնեց սեղանները: Տիար Ա. Պողիկեան արտասանեց ողջոյնի խօսք մը եւ ներկաները հրաւիրեց բաժակ բարձրացնելու ի պատիւ Վեհափառին: Հանդիսավարը՝ Տիար Րաֆֆի Համբարեան, երեկոյին բացումը յայտարարելով, ողջոյնի խօսք մը ուղղեց Վեհափառ Հայրապետին ու Առաջնորդ Սրբազանին, վեր առաւ Նորին Ս. Օծութեան առաջնորդողի ու եկեղեցւոյ ու ժողովուրդին ծառայողի հանգամանքն ու յատկանշները, միաժամանակ անդրադառնալով մեր պատմութեան, հաւաքական կեանքին

ու հայութեան ու մարդկութեան դիմագրաւած հարցերուն մէջ եկեղեցւոյ Ձայնին ներկայութիւնն ու ազդեցութիւնը:

Ճաշի պահուն, ներկաները ականջալուր եղան երաժշտական կատարումներու: Այնուհետեւ, հանդիսավարը յայտնեց, թէ պիտի գործադրուի երեկոյի պաշտօնական բաժինը:

Տիար Աբօ Պօղիկեան, յայտագիրին առաջին արտայայտուողը, շնորհակալութեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին, որ ոչ միայն ընդառաջած է մեր Թեմը հովուապետական այցելութեամբ մը պատուելու Առաջնորդ Սրբազանին ու Թեմի ժողովականութեան հրաւերին, այլ նաեւ «Ասպարեզ»ի հրաւերին, ինչ որ բացորոշ արտայայտութիւն է հայ մամուլին, հայերէն լեզուի ու ընդհանրապէս հայ մշակոյթի հանդէպ անոր սիրոյն, նուիրումին ու յարգանքին: Ան յիշատակեց, որ Վեհափառ Հայրապետին նախածեռնութեամբ, Կաթողիկոսութեան յարկին տակ վերջերս տեղի ունեցած համագումարնէն ու հայութեան մարդուժի հաւաքագրումի նախածեռնութիւնները նորագոյն ապացոյցներն են այս նախանձախնդրութեան ու հոգածութեան: Վերջապէս, Տիար Պօղիկեան նկատել տուաւ, որ այս երեկոյ, Նազարէթ Պերպերեանը պատիւի արժանացնելու Նորին Ս. Օծութեան որոշումը վկայութիւն է մամուլին, մշակոյթին ու հայութեան ծառայողներ գնահատելու Վեհափառ Հայրապետին նկարագրային գիծին, որ յաճախ արտայայտութիւն կը գտնէ զանազան առիթներով:

«Ասպարեզ»ի խմբագիրը շնորհակալութեան խօսք ուղղեց ներկաներուն, որոնք երեկոյին կը մասնակցին՝ պատուելու համար հայոց հայրապետը, նաեւ զօրակցութիւն յայտնելու մեր մամուլին:

Ուրախալի էր այն, որ, ինչպէս յայտարարեց Տիար Պօղիկեան, ազգային բարերար Տէր եւ Տիկին Օսկօ եւ Երան Կիրակոսեան 25,000 տոլարի նուիրատուութիւն մը կը կատարեն ի յիշատակ Տիկին Երանի եղբօր՝ Ազգ. Կեդր. Վարչութեան վաղամեռիկ անդամ Տարօն Աւետիսեանի. նուերը կը տրամադրուի Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի Կեդրոնին: Տիար Պօղիկեան շնորհակալութիւն յայտնեց Կիրակոսեան ընտանիքին, ինչպէս նաեւ մամուլին այլ սատարողներու:

Իր խօսքին յաջորդ բաժինով, Տիար Ա. Պօղիկեան հակիրճ կերպով անդրադարձաւ Նազարէթ Պերպերեանի վաստակին ու խմբագրի, ազգին ծառայողի յատկանիշներուն, գոհունակութիւն արտայայտելով զայն գնահատանքի արժանացնելու Վեհափառ Հայրապետի որոշումին համար: Ան հրաւիրեց մեծարեալին տասնամեակներու գործակից ու մտերիմ ընկերներէն Տիար Սարգիս Մահսերեճեանը, որպէսզի ներկայացնէ անոր կեանքի վաստակը:

Ս. Մահսերեճեան, որ պատանութեան օրերէն եղած է Ն. Պերպերեանի մօտիկ ընկերներէն, յուշերու եւ վկայութիւններու ճամբով ներկայացուց խմբագիրին կազմաւորման, կտրած հանգրուաններուն, այս ասպարեզին մէջ ծառայութեան ու նուաճումներուն ընդհանուր բայց սեղմ պատկերը, առանց անտեսելու Դաշնակցութեան ծառայողի, կուսակցական գործի դաշտերուն մէջ ներդրում ու ազդեցութիւն ունեցողի անոր արժանիքները: Ան խօսեցաւ նաեւ Ն. Պերպերեանի անհատական-ընտանեկան կեանքի կարգ մը երեսներուն մասին, մանաւանդ, որ անոր Տիկինն ալ՝ Էվան, եղած է

դաշնակցական մամուլի անդամ ու ծառայող: Ս. Մահերեճեան խօսքը եզրափակեց բարատեմադրություններով ու այն համոզումով, որ մեծարեալը իր նուիրումով ու գրիչով նոր հորիզոններ պիտի նուաճե այս հանգրուանէն անդին ալ:

Իր խօսքի աւարտին, Ս. Մահերեճեան հրաւիրեց Յ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի ներկայացուիչը, որպէսզի արտասանէ իր սրտի խօսքը:

Տիար Ա. Իզմիրլեան դրուատիքով խօսեցաւ Ն. Պերպերեանի վաստակին ու նուիրումին մասին, վեր առնելով մամուլին ու ազգային կեանքին անոր նուիրումը: Այս առիթով, Տիար Ա. Իզմիրլեան գեղեցիկ գրիչ մը իբրեւ յուշանուէր յանձնեց Ն. Պերպերեանի:

ՇՔԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Չանդիսավարը այնուհետեւ հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը՝ արտասանելու իր սրտի խօսքը եւ բեմ հրաւիրելու Վեհափառ Հայրապետը:

Առաջնորդ Սրբազանը ներկաներուն ուշադրութեան յանձնեց, որ Վեհափառ Հայրապետին հովուապետական այցելութեան իններորդ օրն է այսօր, անդրադարձաւ այդ օրերուն տեղի ունեցած հանդիպումներուն, հանդիսութեանց ու բազմակողմանի այցելութիւններուն, եւ ահա, այս երեկոյ եւս պիտի կատարուի մեծարանք՝ մեր ժողովուրդին ծառայող արժանաւոր գաւակի մը: Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան ու գնահատանքի խօսք ուղղեց Տիար Գ. Թօփալեանին, որ կը հիւրընկալէ ի պատիւ Վեհափառ Հայրապետին այս երեկոն: Ան գնահատանքով արտայայտուեցաւ մեծարեալ խմբագիրին նուիրումին ու վաստակին մասին, ու անձնական յուշերու եւ վկայութեանց ճամբով՝ խօսեցաւ անոր մարդ անհատի ու ազգային կեանքի ասպարեզներուն մէջ ծառայողի արժանիքներուն ու վաստակին մասին: Այս առիթով, Առաջնորդ Սրբազանը գոհունակութեան ու դրուատական արտայայտութիւններով անդրադարձաւ Տէր եւ Տիկին Օսկօ եւ Երան Կիրակոսեան ամուլի նուիրաբերումին, որ հովուապետական այցելութեան առիթով չէ սահմանափակուած քիչ առաջ յայտատարուած նուիրատուութեամբ, այլ, բարերար ամուլը նաեւ կատարած է 75,000 տոլարի այլ նուիրատուութիւն մը՝ ի նպաստ Կաթողիկոսարանին, Ազգ. Առաջնորդարանին ու Ազգ. Վարժարաններուն, հանդիսանալով Շաբաթ, 15 Հոկտեմբերի երեկոյեան, ի պատիւ Վեհափառ Հայրապետին եւ ի սպաս մեր վարժարաններու կազմակերպուած ճաշկերոյթին հովանաւորը, նաեւ պատրաստակամ է յաւելեալ նուիրաբերումի: Առաջնորդ Սրբազանը ապա հրաւիրեց Վեհափառ Հայրապետը, որպէսզի կատարէ պարգեւատրումը:

Նորին Ս. Օծութիւնը յայտարարեց, թէ Ն. Պերպերեանի հետ իր ծանօթութիւնը հաստատուած է Լիբանանի տագնապի այն օրերուն, 1978ին, երբ կոչուած է Լիբանանի Առաջնորդի պաշտօնին եւ ուսումը կիսաւարտ թողած՝ վերադարձած է պատերազմական գործողութիւններու հետեւանքով կիսաւեր դարձած Լիբանան: Ան յիշեց, թէ Նազմն մէկն էր այն երիտասարդ ծառայողներէն՝ դաշնակցութեան հաւատաւոր անդամներէն, որոնք այդ օրերուն լծուած էին գաղութի հարցերուն դարմանումին ու ծանր կացութիւնը հակակշռելու գործին: «Երիտասարդ դաշնակցականներու այդ սերունդը կենսունակութիւն ներշնչեց գաղութին ու գործեց ի խնդիր

հայկական կեանքի վերականգնումին, ու այդ ըրաւ պատասխանատուութեանց բաժնեկցութեամբ, զիրար ամբողջացնելով», շեշտեց Վեհափառը ու կանգ առաւ մեծարեալը յատկանշող երկու գլխաւոր երեւոյթներու վրայ. նախ եւ առաջ, ան նուիրեալ մէկ անդամն է իր կուսակցութեան, որուն ծառայելը յաճախ նախամեծար համարած է իր սեփական ընտանիքէն, անձնականը զոհելով՝ նուիրուած է մեծ ընտանիքին, իսկ երկրորդ արժանիք՝ լուրջ հրապարակագիրի անոր արժանիքն է, որուն «ստորաբաժանումներն» են գեղեցիկ լեզուն, խիտ ոճը, ընտրեալ բառերու եւ դարձուածքներու գործածութեան վարպետութիւնը, հարցեր ու երեւոյթներ տեսնելու եւ վերլուծելու կարողութիւնը, ի հարկին քաջաբար քննադատելու իր նկարագիրը ու մանաւանդ ըսելիք ունեցողի իր յատկանիշը: Այս բոլորով, շարունակեց Վեհափառ Յայրապետը, զինք արժանի կը գտնենք բարձր գնահատանքի ու որոշեցինք «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պատուել զինք:

Այս խօսքերով, Վեհափառ Յայրապետը շքանշանը անցուց մեծարեալին կուրծքին, մինչ ներկաները յոտնկայս ծափողջոյններով կ'արտայայտէին իրենց ուրախութիւնն ու խնդակցութիւնը: Վեհափառ Յայրապետը համոզում յայտնեց, թէ մեծ վարդապետը՝ Մաշտոց, վստահաբար ուրախ է այս պահուն, որովհետեւ իր ժառանգութեան ու աւանդին պաշտպան մը, ծառայող մը կը ստանայ իր անունը կրող շքանշան մը: Ան գնահատանքի խօսք ուղղեց նաեւ Տիկին Էվա Տերվիշեան-Պերպերեանին, որ Նագոյին նման մամուլին նուիրեալ մըն է եղած, ինչպէս նաեւ մեծ ծառայութիւն մատուցած Կաթողիկոսութեան, նոյնքան արժանի գնահատանքի ու մեծարանքի: Վերջապէս, Վեհափառ Յայրապետը դրուատիքով արտայայտուեցաւ երեկոյի հիւրընկալին մասին եւ անոր յանձնեց յուշանուէր մը:

Ն. Պերպերեան երախտագիտութեան խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնցմէ բան մը սորված է ու կազմաւորուած: Ան ձայնակցեցաւ հանդիսավարին այն ակնարկութեան, թէ Վեհափառ Յայրապետը «բարոյականի կողմնացոյց է» եւ աւելցուց, որ 21րդ դարու այժմու պայմաններուն մէջ, Նորին Ս. Օծութենէն աւելի մեծ ակնկալութիւններ ունիք: Ան յայտնեց, թէ ինչ որ առած է ժողովուրդէն, զայն կը վերադարձնէ ժողովուրդին, եթէ այս առաքելութեան մէջ յաջողի, բաւարարուած կը չգայ, իսկ եթէ չկարենայ, պիտի շարունակէ այդ գործը, որպէսզի «հայու եւ դաշնակցաականի տեսակը մնայ ու գոյատեւէ, որովհետեւ առանց այդ տեսակին ներկայութեան, երկրի ու ժողովուրդին ապագան դժուարութիւն պիտի ունենայ»: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ Վեհափառ Յայրապետին, այս գնահատումը նկատելով անոր էութեան արտայայտութիւնը: Վերջապէս, ան շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսք ուղղեց Ա. Պողիկեանին եւ Գ. Թօփալեանին, որոնք կազմակերպած ու հիւրընկալած են երեկոն, մեծարելով Վեհափառ Յայրապետն ու մամուլի մէկ սպասարկուն:

Երեկոյին պաշտօնական բաժինը վերջ գտաւ Վեհափառ Յայրապետին աղօթքով, որմէ ետք, ներկաները երկար ատեն մնացին ջերմ մթնոլորտին մէջ, խնդակցութիւն ու շնորհաւորութիւն յայտնելով մեծարեալ խմբագիրին:

RECEPTION IN HONOR OF HIS HOLINESS ORGANIZED BY ASBAREZ

- HIS HOLINESS AWARDS NAZARETH BERBERIAN “ST. MESROB MASHDOTS” MEDAL

On Friday, October 14, 2011, a reception in honor of Catholicos Aram I was held during which His Holiness honored editor and scholar Nazareth Berberian for his over forty years of service to the media and community.

The reception was hosted by Mr. Koko Topalian at his residence, and with the participation of more than one hundred fifty guests. His Holiness was accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Clergy, and Central Executive and Executive Council members. Among those in attendance were ARF Central Committee Chair Mr. Avedik Izmirlian and members, Asbarez editor Mr. Apo Boghikian and colleagues, members of Mr. Berberian's family, sponsors, and friends.

Upon his arrival, His Holiness conducted the traditional blessing of salt and bread, then blessed the tables. Mr. Boghikian welcomed the guests, inviting them to raise their glasses in honor of His Holiness. In his welcoming remarks, Master of Ceremonies Raffi Hamparian reflected on the leadership and guidance of His Holiness, and on the role of the Church in our history and lives today.

A cultural program took place during dinner, after which the official program began.

Mr. Boghikian expressed his appreciation to His Holiness for accepting the request of Asbarez to host this reception in his honor. He stated that the decision by His Holiness to honor Nazareth Berberian is a demonstration of the love, respect, and dedication of His Holiness towards those who serve the Armenian media, language, and culture. Mr. Boghikian also thanked the guests in attendance for coming to honor His Holiness and support our media.

Mr. Boghikian then announced that Mr. and Mrs. Osko and Yeran Karaghossian were donating \$25,000 to the ARF Central Committee in memory of Yeran's brother Daron Avedissian, who was a member of the Catholicosate Central Executive. He thanked the Karaghossian family for their generosity.

Mr. Boghikian then reflected on the career of Mr. Berberian, and invited Mr. Sarkis Mahserejian, a close friend of Mr. Berberian, to introduce him.

Through anecdotes and memories, Mr. Mahserejian spoke of the different stages of Mr. Berberian's life that led him to where he is today. He spoke highly of his service to the ARF and also that of Mr. Berberian's wife Eva, who has also served ARF media outlets. Mr. Mahserejian extended his best wishes to Mr. Berberian and invited Mr. Izmirlian to deliver his remarks.

Mr. Izmirlian praised the dedication and service of Mr. Berberian and presented him with a beautiful pen on this occasion.

The Prelate was then invited to deliver his message.

The Prelate reflected on the Pontifical Visit of His Holiness and the activities and meetings of the past nine days. He expressed thanks and

commended Mr. Topalian for hosting the evening. The Prelate lauded the career and service of Mr. Berberian and shared his own memories. He expressed his appreciation to the Karaghossian family for their continued generosity, and reminded the guests that in addition to their donation that evening, just over a week ago they donated \$75,000 to the Catholicosate, Prelacy, and Prelacy Schools, and were the hosts of the banquet in honor of His Holiness which was held the following evening. The Prelate then invited His Holiness for the award ceremony.

His Holiness stated that he first became acquainted with Mr. Berberian in 1978, during the civil war in Lebanon, when the Pontiff was called to serve as the Prelate of Lebanon. He remembered Mr. Berberian at that time as a young devoted member of the ARF, and among the generation of ARF members who breathed life into the community and served towards their livelihood during those difficult days. He spoke of Mr. Berberian as first and foremost a devotee of the ARF who sacrifices self to serve his larger family, and second as a highly talented writer, editor, and journalist. In commendation of his life's work, His Holiness awarded him the "St. Mesrob Mashdots" medal, which was met with a standing ovation and great applause and cheer from the guests. His Holiness stated that St. Mesrob must be proud that an individual like Mr. Berberian who has preserved and fostered his legacy is receiving a medal which carries his name. His Holiness also commended Mrs. Eva Dervishian-Berberian for her service to the Armenian media and to the Catholicosate. In conclusion, the Pontiff thanked Mr. Topalian for hosting the evening and presented him with a memento.

Mr. Berberian expressed his thanks to all those who have influenced and shaped him throughout his life. He echoed the words of the Master of Ceremonies describing His Holiness as a moral compass, and expressed his gratitude for the great honor. He concluded by thanking Mr. Boghikian and Mr. Topalian for organizing and hosting the evening.

The official program came to a close with the benediction by His Holiness.